ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ Ի ՆՊԱՍՏ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԴՈԿՏ. ՋԵՈՖՖՐԻ ՖԻՇԵՐԻՆ, ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼԱՄԲԵԹԻ ՊԱԼԱՏ, ԼՈՆԴՈՆ

Սրբազան Եղբայր Մեր ի Քրիստոս.

Ուրախությամբ տեղեկացանք Ձերդ Գերաշնորհության հայտարարության մասին՝ ընդհանուր և լրիվ զինաթափման վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպությունում Սովետական Կառավարության կողմից արված առաջարկի առթիվ: Ձեր հայտարարությունը ի նպաստ խաղաղության դատի և ի նպաստ պետությունների զինաթափման ծրագրի, իրավամբ մեծ արձագանգ գտավ միջազգային մամուլում և հատկապես մեր երկրում:

Մեր միջև ստեղծված եղբայրական սիրո կապերը և մեր եկեղեցիների միջև հետագա առավել գործակցության հույսը թույլ են տալիս Մեզ Մեր մտածումը արտահայտելու Ձեզ նաև այս հարցի առնչությամբ, որ բախտորոշ նշանակություն և իմաստ ունի համաքրիստոնեական և միջազգային հարաբերությունների տեսակետից:

Հայ եկեղեցին և Մենք ի սրտե ողջունում ենք Ձերդ Գերաշնորհությանը այս բարի առիթով և խորապես գնահատում ենք Ձեր սույն կեցվածքը, որով առավել ամրապնդվում ենք այն մեծ հույսով, թե կպահպանվի աշխարհի խաղաղությունը և կխնայվեն մարդկության մի նոր պատերազմի արհավիրքները:

Անշուշտ որ ժողովուրդների և եկեղեցիների առաջ դրված բազում հարցեր կան, որոնց շարքին նաև շատ ցավոտ հարցեր, որոնք իրենց ճիշտ ու արդար լուծմանն են սպասում, սակայն Մենք համոզված ենք, թե բոլոր տեսակի խնդիրները հարկ է լուծել խաղաղ միջոցներով, լայնախոհությամբ և համբերությամբ:

Մենք տեսանք, թե գոնե վերջին երկու մեծ պատերազմները ի՞նչ և ի՞նչ չափով կարողացան լուծել միջազգային հարցերը: Մենք խորհում ենք, թե արդարությունը ավելի խաղաղությամբ կարելի պիտի լինի իրականացնել քան թե պատերազմով:

Մեր այս խոհերը բխում են մեր քրիստոնեական զգացումից, բայց նաև մեր ժողովրդի, հայ ժողովրդի խղճից և մեր պատմության փորձից:

Անա թե ինչու Հայ Եկեղեցին, Ս. Էջմիածնի գլխավորությամբ, միշտ աղոթել և աղոթում է անձանձրույթ, համայն աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման համար, որի իրականացման դրական գրավականներից մին է հանդիսանում ընդհանուր և ամբողջական զինաթափման ծրագրի կենսագործումը բոլոր պետությունների կողմից, որի համար Դուք ևս Ձեր ձայնն եք բարձրացնում: Ձերդ Գերաշնորհության հեղինակավոր խոսքը և Ձեր գլխավորած Եկեղեցու աշխույժ գործունեությունը այս նպատակով, անշուշտ որ հետզհետե կդառնան առավել արդյունալի՝ ի փառս Ձեր ժողովրդի և Անգլիական մեծ Եկեղեցու:

Ձերդ Գերաշնորհության 29 մայիս թվակիր Մեզ ուղղած գրության հաղցր տպավորության ներքև, խորհեցինք սույն Մեր մտածումները Ձեզ հաղորդել Ձեր հայտարարության առթիվ, միշտ մնալով դեպի Ձեզ եղբայրական սիրով ի Քրիստոս և լավագույն զգացումներով:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1 Դեկտեմբերի 1959 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ